Կադաստրի կոմիտեի ղեկավար

պարոն Սուրեն Թովմասյանին

Իրավաբանական անձ՝ «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ»-ից

(կազմակերպության անվանում)

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, 0009, Իսահակյան փողոց 28, շենք 3

ՀՎՀՀ՝ 02513655

Էլեկտրոնային փոստ՝ armsakhfd@gmail.com

Հեռախոսահամար՝ (+374)10 587864, [redacted]

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՀԱՅՏ

Հարգելի պարոն Թովմասյան,

խնդրում եմ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N4 հավելվածի պահանջների համապատասխան «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությանն ընդգրկել

(կազմակերպության հիմնական ներկայացուցչի անուն, ազգանուն)

Կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում:

Մարզը կամ համայնքը, որտեղ հայտատու իրավաբանական անձը անձը ծավալում է իր գործունեությունը՝ հիմնականում Երևան քաղաքում: Կազմակերպությունն ունի նաև մասնաճյուղեր ՀՀ Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում՝ Գյումրի, Գավառ և Գորիս քաղաքներում համապատասխանաբար:

Կադաստրի կոմիտեի գործունեության այն ոլորտը, որում հայտատու իրավաբանական անձը ունի համապատասխան գործունեության փորձ կամ մասնագիտական փորձառություն.

- Ֆիզիական և իրավաբանական անձանց անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, դրանց սահմանափակումների պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ հարցումներ կատարելու, համապատասխան տեղեկատվություն փնտրելու և ստանալու, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների

և պարտականությունների իրավական հիմքերի, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունների, ինչպես նաև ոլորտի պետական տուրքերի դրույքաչափերի, վճարման գործընթացների կարգի ու ժամկետների ոլորտում:

- Ինչպես նաև ինքնակամ կառույցների հաշվառման և պետական գրանցման, կամ դրանց օրինականացման դիմումները բավարարելու կամ մերժելու հիմքերի, դրանք բողոքարկելու կարգի ու ժամկետների վերաբերյալ:
- Հողային վեճերի լուծման եղանակների, սերվիտուտի ոլորտի հարցերին:

Այս փորձառությունը «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունը, ձեռք է բերել իր երկարամյա տարիների գործունեության ընթացքում՝ իր շահառուների դիմումների և գործերի քննարկման, ինչպես նաև խորհրդատվությունների ընթացքում, ինչպես նաև իր անձնական փորձից՝ գրասենյակային տարածքներ վարձակալելիս և առցանց գործարքներ իրականացնելու ընթացքում:

Միևնույն ժամանակ «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն Մերի Խաչատրյանս եղել եմ Երևանի պատմական "Կոնդ" թաղամասի վերակենդանացման հայեցակարգի մրցույթի ժյուրիի անդամ ներկայացրել թե՛ բանավոր, թե՛ գրավոր առաջարկություններ, ինչպես նաև մրցույթին մասնակցող նախագծերի վերաբերյալ ներկայացրել հատուկ կարծիք: Միևնույն ժամանակ, հանդիսանում եմ Կոնդ թաղամասի բնակիչների իրավական հարցերով խորհրդատուն, որոնց հիմնախնդիրներով արդեն երկար տարիներ է, որ զբաղվում եմ որպես իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչ:

Մասնակցել եմ նաև տարբեր օրենքների և իրավական ակտերի նախագծերի քննարկումներին և ոլորտը կարգավորող նախագծերի վերաբերյալ ներկայացրել գրավոր առաջարկություններ, որոնց մեծ մասը ներկայացվել են ՀՀ պետական լիազոր մարմիններին և/կամ ուղարկվել www.e-draft կայքին:

Ի դեպ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ժամկետի երկարաձգման առաջարկությամբ ժամանակին դիմել եմ ՀՀ կաղաստրի պետական կոմիտեին՝ բերելով Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ինքնակամ կառույցների հաշվառման ժամկետների բացթողման օրինակները, իրավական ակտերի սեղմ ժամկետների և այդ ժամկետներից անտեղյակ լինելու արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ չեն կարողանում օրինականացնել իրենց ինքնակամ կառույցները: Եվ ի շնորհիվ ՀՀ կաղաստրի պետական կոմիտեի՝ այս հարցն արդեն կարգավորվել է օրենքով և գործելու է մինչև 2026թ. դեկտեմբերը և մեր կողմից ևս իրականացվում է իրազեկման արշավ, որպեսզի մեր հայրենակիցները տեղեկացված լինեն այդ գործընթացի և ժամկետի մասին:

Իրավաբանական անձի հիմնական ներկայացուցչի՝

Մերի Ռուբենի Խաչատրյան

(անուն, հայրանուն, ազգանուն)

Նույնականացման քարտ՝ [redacted]

(անձնագրային տվյալներ)

meri.r.khachatryan@gmail.com ; [redacted]

(էլեկտրոնային փոստ, հեռախոսահամար)

Լրացուցիչ նշումներ.

Մերի Ռուբենի Խաչատրյանս հանդիսանում եմ «Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ տնօրենը

Առդիր՝ 18- էջ:

Հայտատու իրավաբանական անձի

ղեկավար՝ Մերի Խաչատրյան ----------

(անուն, ազգանուն)

17.03.2026թ.

Ք. Երևան